

15. ՄԱՐՈՆ

Կէլնի. կէլնի մեյ խատ թակավոր: Էսա թակավորին մեյ խատ լաճ կէլնի, վեր աշխրիս իրեսին էլ ուրիշ զադ չէլնի:

Մեկ օր էսա թակավորի լաճ կառնի ուր ծին. կէրթա վեր ախպրին որ ճրի: Ծին ճրելու գյանխ կտեսնա էն թանրանֆեն մեյ խատ ախչիկմ կուժ ղրե վեր թևին կուգյան. որ ճյուր տանի:

Թակավորի լաճն ի, ի՞նչ կանղնար կիրիշկի. կտեսնա. որ խորոտ ի էսա ախչիկ, համան կասի. - Թոդ գյան մոտոխասնա, մոտիկմանց մեյ խատ ալըջի գյեոզնան պիտի իրիշկամ, խենքյ ադորթմանց խորոտ ի, թե չէ՝ ըսկուն կէրևեր:

Ախչիյն ի. որ կմոտոխասնա ախպրին, որ կուժ ճյուր լցի տանի. կտեսնա, որ թակավորի լաճ ուր ծին ճրիլ թողե. կայնե ուր թանմանշան կանի:

Թակավորի տղեն, որ կմոտոխասնա ախչիկ. մեյ խատ ծին կթողնի, կկայնի իսոր խորոտմ թաստին կանի, կտեսնա, որ ադորթմանց էսա ախչիկ շատ խորոտ ի. կասես խուրն խրեղեն էլնի, որ կիրիշկաս ինոր աչք ունք. կասես, գյեռ ադորթմանց կանմով են քանշե, ինոր իրեսի կարմրութեն, կասես նուռ ին պերե սյնան կաթցուցե վեր ինոր իրեսին, սև-սև աչկեր, կլոր պերան, կլոր իրես, ասյա բանժ բոյ, զանթի էլ մի խառցուցե. կասե գյեռ չինարի ծառ ի առնետ կայնե. ըսկուն ի որ կասես պատկեր ի. պատկեր. չուտես-չխմես, կայնես մունջ իդրան սեյր անես. ըսկուն որ խորոտ ի:

Թակավորի տղեն ի, որ կտեսնա էսա ախչկան խորոտկութեն. բայլմիշ կէլնի. վերեն կսիրահարվի վեր էսա ախչկան, ըսկուն կէլնի, որ ծեռ ոտ կթուլնան, ծին կթողնի էդան տեղ, կինի էսա ախչկան ետև, կասի՝ էրթանմ. տեսնամ խենքյ էսա վիր ախչիյն ի, իսոր ի՞նչ մեր ի պիրե. որ ըսկնա խորոտ ի, ի՞նչխ որ էլեր ի, ես իսոր պիտի առնեմ, ով որ էլնի, կուզի աղքատ էլնի. կուզի զանգյին:

Էսա ախչիյն ի, կուժ կլցի, կառնի կինի ճանապանխ, որ էրթա տուն. կտեսնա, որ թակավորի տղեն ծին թողից էնտեղ. ինգյանվ ուր ետև, կուգյան, ինքն էլ ամչնալով պանն անելով զեորեռվ ուր կթանլի տուն:

Թակավորի լաճն ի, որ կինի էսա ախչկան իտև կէրթա, կտեսնա, որ ախչիկ կնաց, մտանվ մեյ խատ խանրանպան տունմ. որ մտավ ներս, պոծավ էսա ախչիկ. էսա թակավորի տղեն կնանց ինոնց դյուռ դրկցից խասկցավ, որ էսա ախչիկ մեյ խատ խովվու ախչիկ ի, որ խասկցավ, դառցավ էկավ ուր ծին ճրից, լվաց, շոտմ կնանց տուն:

Լաճն կէրթա՛ տուն թե չէ, կէրթա՛ խոր. մոր հալ-հեքյանթ կպատմի. թե. - Ես ծին ճրելու գյախ տեսա էն թանրանֆից մեյ խատ խեղճ ախչիկմ էկալ կուժ վեր թանին. էկավ ճյուր որ տաներ. ես տեսա էսաս ախչկան խորոտութեն. ասի՝ մեյ խատ էյ մոտոխասնամ տեսնամ խենքյ անորթմանց ըսկնա խորոտ ի: Մարե՛. խորոտկութեն մասե. մեյ պանն ասա. իմ չեոքվեր զանթի առեց գյետին. ես ըսկուն էլա՛, որ էյ չկացա դիմացեր ի: Մարե՛, էդա ախչիկ ըսկուն խորոտ էր. ըսկուն խորոտ էր. կասես խուրն խրեղեն էլներ. ինոր աչք-ունք. ինոր բաժ-բոյ. ինոր իրեսի կարմրութեն. երեսի կլորութեն, կասես գյեր աշխարհս մեչ մենակ էսա ի, կասես պատկեր էլներ: Ծարս կտրավ էլա՛ ինգյա իտև. ասի՝ տեսնամ խենքյ էսա վի՞ր ախչիյն ի. վիր ախչիկ որ էլնի. ես պիտի սանիմ: Կնանցի տեսա, դյուր-դրկցներաց խուսցուցի, ասի, թե էսա վի՞ր ախչիյն ի, վանրհասըլ հասկցա, որ մեյ խովվի ախչիկ ի: Հասան մարե, ի՞նչ էլ որ էլնի. իս էդա ախչիկ ի՞նչխ էլե պիտի առնեմ. որ էն էլնի՝ կառնեմ, որ էն չէլնի՝ էլ ես աշխարի իրիսի վերեն չիմ պսայվի:

Մերն ի, լաճու սիրտ չկոտրելու համար, կասի. - Աղե՛կ. պալա՛մ. մառախ մանե:

Լաճ կմիյամտվի ուրախ-ուրախ կէլնի տյուս:

Ավուր մեկ ուրիշ երկրի թակավորի լաճ կէլնի աշխար ֆոալ: Կուգյա՛, կուգյա՛ կխասնի էսա երկիր, կուգյա՛. որ մտնի քյաղաքյ. տեղ քյաղաքյ չմտած. դաշտ ռաստ կուգյա՛ էսա խովվուն. կնստի էսա խովվու մոտ, խուրց փորձ կանի. քյաղքյից խուսպանր կառնի. որ աջամութեն չքաշի. որ մտնի քյաղաքյ:

Էսա թակավորի տղեն ի. կնստի էդա տեղ գյեր մեյ թանրանֆեն քյաղքյից սալախ կառնի, մեյ թանրանֆից էլ ուր խանգյ կառնի, որ ինի ճանանախ էրթա՛ քյաղաքյ:

Էսա լաճն ի, յան ինկե վեր խոտերաց, ոտքեր պարծե խանպանր կուտա խետ խովվուն. գյեր կասի ես այսինչ երկրի թակավորի տղեն իմ, էսա խանպանր տալու մեչն ին. էսա լաճ կտեսնա. որ էն թանրանֆից մեյմ կուգյա՛. աչկեր կպանցրացուցի. կտեսնա. որ մեյ խատ ախչիկմ բոխչեմ ընթի տակ դողրի կուգյա տեխ ուրենց:

Խովիվն ի կտեսնա ուր ախչկան. կասի՝ խազար զեորեով ախչիյս էկավ, խաց իպե, ես անութի մեռա:

Խովվի ախչիյն ի, մոտոխասնա գյլեոխ կուտա, բոխչեն էլ կուտա խոր. ինքյն էլ ամչնալով կքանշվի մեկ յան կկուլյնի:

Էտա թակավորի տղեն ի. մեյ խատ որ աչկ կինի էսա ախչկան երես, որ կտեսնա էսա ախչկան խորոտկութեն, բանյլըմիշ կէլնի, ուր աչից չի ավատաս. կասի՝ ըսկնա էլ խորոտկութեն կէլնի՞: Կդառնա էսա լաճ խովվին կխառցուցի. կասի. - Խառցուցել ամոթ չէլնի, էսա ախչիկ վե՞ր ախչիյն ի, մաշալա, խորոտ ախչիկ ի:

Էսա խովիվն ի, կասի. - Թե որ տեր չէլնի, իմն ի. գյեր ծծղալով կասի սանքիմմ:

Թակավորի լաճն ի, մեյ խատ էլ կդառնա խորոտմ թույմին կանի. կտեսնա, որ անորթմանց ախչիկ չի, ապա խուրն խրեղեն, ըսկուն կէլնի որ էսա լաճու սիրտ կջղփա վեր էսա ախչկան, կսիրահարվի վերեն, կդառնա էսա խովվուն կասի. - Ես որ քյե մեյ պանն ասիմ, խո չես նեղասրտե:

Խովիվն ի կասի. - Ի՞նչխ նեղասրտիմ. թող մեկ-էրկու ասա:

Էսա թակավորի լաճն ի, կասի. - Որ դողրին կուզես. ես որ էսա ախչիկ տեսա չսվատացի. որ քոն էր. մկա ի՞նչ որ ի, իմ աչկից շատ զանրկեց քյո ախչկա խորոտկութեն. ըսկուն որ իմ սիրտ մտավ. ես որ քո ախչիյն ուզիմ զիկ, կուտա՞ս, ի՞նչ կասես:

Էսա խովիվն ի, կասի. - Թուսկավոր ապրած կենաս. տյու բանշլայեցիր վեր զիկ թուսնա անիլ:

Էսա թակավորի լաճն ի. կասի. - Չէ՛. սրտանց կասիմ. թե որ կուտաս ես իմ թմղմրիվք տեսնամ:

Էսա խովիվն ի կտեսնա. որ թակավորի տղեն ամղորթմանց. սրտանց ի կասի. է ուր ախչիյն էլ չանք թակավորի տղի՞ն էլ ավել մարթու պիտի տա. կասի. - Թակավոր ապրած կենաս. թող ըսկուն ախչիկ խաւզար-խազար քո գյլխուն կուրպանն էլնի. էն էլ պա՞ն ի:

Էսա թակավորու լաճն ի, խետ խանպանր էսա խովվուց կառնի. շոտմ ուր մատնիկ կխանի, կուտա ախչկան. ինք մեյ խատ կմտնի քյաղաքյ, կէլնի տյուս, կուգյա ճանպասխ էսա խովվուն կասի. - Ես քյե էնգյախ մոոցա. որ ասի. գյեռ ես կդեպնիմ մեր քյաղաքյ. կուգյամ նշանել տանել մեկ կանեմ. էլ չեմ աչկե, կառնեմ դողրի կէրթամ իմ երկիր:

Էսա խովիվն ի. ի՞նչ կանա ասե, թակավորի լաճու խապարն ի. կասի. - Տյու կիտես, թակավոր ապրած կենաս. ես եմ իմ չլուտ ախչիկ. ինչ որ կտեսնաս ինորից էլ ավել պան չունեմ. որ խագյուցեմ էորեռխկիմ. ինչ որ վերեն ի, գյեռ էն ի, կուզես ըսկուն տար. կուզես թազա պե, խագյու տար. ի՞նչխ որ կուզես. գյեռ էսա ի վարհասըլ իմ կարողութեն, ես չունեմ պալգյի ախչիս էրթա խաղաղ սրտով մեյ խատ խաց ուտի:

Թակավորի լաճն ի կասի. - Քյե դավի չկա խետ խալվներաց, էդա իմ կիցած պան ի:

Էսա թակավորի լաճն ի, կթողնի կէրթա ուր երկիր, որ պատրաստութեն տեսնա, գյա շոտմ ատնի. էրթա:

Խովիվն էլ ուրախ-ուրախ կէլնի կուգյա տուն, կնգյանն կպատմի, թե. - Ես ըսկնա դաշտ իմ ոխչրներ կարածի, տեսա էն թմրանֆից մեյմ ծիով էկավ, էկավ դողրի մոտ զիկ, նստավ խանգյեստացավ, ուրիշ երկրացի էր, էլեր էր աշխար ֆոալ, սորա խաոցուց, թե քյաղաքյ ի՞նչ կա. չկա, սալախ առնելու էսա խանպրի մեչն ինք, տեսանք Մարոն բոխչեն ընթի տակ էն թմրանֆից էկավ: Էսա լաճ խետ տեսավ Մարոյին, խավնավ, ասաց. «Գյեռ ես դեպա մեր քյաղաքյ դաոցա, կուգյամ ախչիկ կտանեմ»: Պանից դուս էկավ, որ էսա լաճ թակավորի տղա ի: Ես էլ ասի թակավորի տղից ավելի՞ մարթու պիտի տամ, խոսկ տվի, հազր խալվի, պանի էլ փանրն չենք իդա, ես խետ զրյուցեր իմ:

Կնիյն ի. որ կլսի: Ախչիկ նշաներ ի ուր մարթ, մատնիկն էլ լաճ ընցուցե մատ, պոծե:

Կասի. - Աղեկ, տյու խոսկ տվեր էդա թակավորի լաճուն. համան խոսկ կա. որ ըսկուն կզրյուցին, մեր թակավորի տղեն էլ կուզի ատնել Մարոյին, էնգյախ ամղորթ էլավ ի՞նչխ անինքյ, սորա էլ չենքյ կանա փոթնե թակավորի ծեռնեն:

Խովիվն ի կասի. - Կնի՛կ, էն որ մունջ խոսկի ալա մեր թակավորին, ես ի՞նչ կիտեմ ամղորթմանց կէլնի, թե՞ չէ, էս էլ որ ծեռաց պաց թողինք. սորա էրկու ծեռով խող կուտանքյ վեր մեր գյլխուն:

Խովվի կնիյն ի կասի. - Գյեռ մարթ, էն որ խոսկ տվեր իս, էն էլ թակավորի տղա ի, որ ետ ատնինք մեր խոսկ, ավատա, որ էլ պարկանա, ով կիտի ի՞նչ կանի, մկա քանի որ մեր թակավորի տղեն ալա չուզե, պան չկա, խետ որ ուզից կասինք՝ նշաներ ինք, այս ինչ թակավորի լաճուն:

Խովիվն ի կասի. - Խա՛, կնիկ, խաւ էդասկնա կասինք, էդասկնա աղեկ ի:

Կընցնի մեյ ըսկնա տաս տանխինգյ օր: Ավուր մեկ էսա թակավորի տղեն խետ իրեքյ խուգյու կուգյամ. կուգյամ դողրի էսա խովվի տուն կէճնի:

Իրիկուն ի խովիվ կուգյա. պարև. աստծու պարին կասի, կնստի. գյեռ կբաշլային խապար տալ, սարից ծեորից նաղլ կանին, չյուր քնո գյախ. խաց պան կուտին, կպաոկին կքնին:

Առատուն կէլնին վեր էսա թակավորի տղեն ի կասի. - Դե՛. շոտ հանզրվեքյ. որ էսօր իրիկուն պիտի ինինք ճանապախ. ուր խանդամներաց կասի:

Խաղամներն ի կէլնին. կէրթան տեխ ծիյանք կճրին. կթիմրին. կորմ. պան կուտան. կուգյան:

Իրիկվան տեխ թակավորի տղեն շուկից կդանոնա. կնացեր էր շուկեն ատիյացու պաներ առնի. որ տանի ուրենց քյաղաքյ: Կուգյան տուն. տուն զաթի թաղարյուք տեսնելու մեչ ին:

Էսա լաճ էլմել կդառնա շուկեն. իրեքյ ծեռքյ շոր կառնի՝ մեկ մարդանա. էրկուս զանանա. մեկ ծեռքյ մարդանին զաթի խովվու խամար, մեկ ծեռքն էլ խովվու կնգյան խամար. էն մեկել՝ Մարոյի խամար, որ խալնի չյուր էրթան ուրենց երկիր. էնտեղ նոր շոր պան կուտա կտրել, նոր խարանիս կանին, նոր ուրախութեն:

Լաճն ի կպերի էդա իրեքյ ծեռքյ խալվներ կուտա ըմեն մեկ ուր տիրոջ. մեկ ծեռքյն էլ կխագյուցի ախչկան. գյեռ կասի. թե ես նոր պիտի էրթամ մեր քյաղաքյ. ախչկան նոր խարսի խալվներ կուտամ կարել. ծի էլ նոր իմ ուզած կտորից կարել կուտամ. կէորեռխկեմ ծե ատիյան:

Խովիվն ի. որ տեղից տեսներ էր թազա շոր, շատ կուրախնան վեր ուրենց շորերաց: Իրիկուն մթան գյախ կէլնին էսա թակավորի լաճ ուր իրեքյ խանդամներ ինան Մարոն էլ կխեծուցին վեր մեյ խատ սիվդակ ծիյում, կինին ճանապախ կէրթան:

Խովվի դյուր-դրկցներն ի կտեսնան. որ խովվու դռան վերեն կալապալախ կա. կխարցուցի. կխասկնան. որ ուրիշ երկրի թակավորի լաճ նշանվեր էր վեր էսա ախչկան, էկավ ուր կնիկ տարավ:

Ծատեր բանթալամիշ կէլնին վեր էսա ախչկան, կասին՝ սևավորի բախտն էր խետ թակավորի լաճուն պսայվել. շատերն էլ կասին՝ ազորթմանց ախչիկ կաժեր. որ էլներ թակավորի խարս:

Էն մեկել օր զաթի քյաղաքյ տունդ կառնի. թե այսինչ խովվի ախչիկ էլեր ի այսինչ երկրի թակավորի խարս. համդա էլ էկան տարան:

Էսա ծեն կէրթա կինի թակավորի լաճու ականջ:

Թակավորի լաճ խետ որ կլսի մարթ կէորեռխկի խասկնա, թե ազո՞րթ ի էսա, էն ի՞նչ պան ի. ի՞նչ թակավորի տղա ի իկե էսա ախչիկ. որ ուր սիրահարն էր. առե կնացե:

Կուգյան կխառցուցին կփտոին կտեսնան, որ ազորթմանց թակավորիմ լաճ իրեքյ խանդամով ըստյունց չորս օր առաճ իկե տարե:

Թակավորի լաճն ի, խետ որ կլսի կէլնի ինք կուգյա խովվու մոտ խասկնալու խամար՝ խենքյ ի՞նչխ էլե. ի՞նչ ընցե տանոցե. որ ըսկնա բիրդան Մարոն էկան տարան վեր ուրենց խանպան չէլավ:

Թակավորի լաճն ի, կէլնի ինք կուգյա մեկ իրիկուն էդա խովվի մոտ, կխառցուցի. կասի. - Ի՞նչխ էլավ. ի՞նչխ չէլավ, պիտի զմեն գյլխաց պատմես համ դա էլ էդա ի՞նչ թակավորի տղա էր. պիտի ասես:

Խովիվ ինան ուր կնիյն ի. որ կլսին էսա պան կկեռափակվին կմնան. համանն ի՞նչ անին, ճար չկա. պիտի ասեն:

Խովիվն ի կբանշլայի ասել, կասի. - Թակավոր ապրած կենաս, ես ըստյուց քսան օր առաճ դաշտ իմ ոչխարներ կարածի, տեսա էն թանրանֆից մեյ խատ

կարմիր ծիլավորմ էկավ. դողրի մո գիկ. ծիլուց էճուվ տակ. բաշլվայից գիկ խաղցուցել ասել. թե՝ էսա քյաղաք. ի՛նչխ կերթան. ի՞նչխ չեն երթա. ի՞նչ կա քյաղաքյ, խորոտ ի. վարհասլը զմեն սկան սկանա մանրամաս խաղցուց: Ես էլ ասի՝ ամոթ չէլնի խաղցուցել՝ դյու որ տեղացի ես. ո՞վ ես. որ մեր քյաղքյի ճար ճանպանխ չես գիտե: Էսա մարթ ասաց՝ ես այսինչ երկրի թակավորի տղեն իմ. եկեր իմ էսա քյաղաքյ կուզիմ ֆոալ: Ես էլ ի՞նչ որ գիտի. ասի: Մենքյ էսա խապրի մեչն ինքյ. տեսա էն թարաֆից իմ ախչիկ Մարոն խացի բոխչեն ընթի տակ էկալ. գիկ խաց իպե, էսա լաճ. որ տեսավ Մարոն. մեկ տեսակ էլավ, էլ զմեն պան մոոցավ. դաղցավ գիկ խաղցուց. ասաց՝ էսա վե՞ր ախչիյն ի, ասի՝ իմ ախչիյն ի. ղաղցավ ասաց՝ ես որ էսա ուզեմ գիկ խասմար, կուտա՞ք: Ես էլ կիտա վեր գիկ կծողա, ասի՝ ինչի թուանա կանես գիկ. էսա լաճ ասաց՝ չէ. թուանա չեմ անե. ես դողրի կասիմ: Ես էլ տեսա. որ էսա լաճ աղորթմանց կասի. ասի գի գիկ՝ ի՞նչխ չեմ իտա. թակավորի լաճուց ավելի մարթու՞ պիտի տամ: Խոսկ տվի թե չէ՝ էսա լաճ մատնիկ խանեց, համան կոխեց. Մարոյի մատ: Գիկ էլ ասաց՝ աճա ես գյեր դեպա մեր քյաղաքյ դաղցա, որ դաղցա՝ կուգյամ ախչիկ կաոնեմ. կէրթամ: Ինքն էլ էկավ մեր քյաղաքյ, մեյ սահաթ ֆուաց չֆուաց, դաղցավ էկավ ճանպանխ. էլմ էլ գիկ տեսավ ասաց՝ տանխինգյ օրից սորա կուգյամ կտանեմ Մարոն: Ես էլ ասի՝ պանրեով խազար պանրեով: Տանխինգյ օր քաշեց. չքաշեց մեկ էլ տեսա մեկ օր իրիկուն դաշտից էկա տուն. էկա տեսա. որ գյեր էդա լաճ խետ իրեքյ խաղամի եկեր ին. նստեր ին, գիկ կաչկին: Էկա տուն, խաց պանն կերանքյ. էդա կիշեր մնաց էն մեկէլ առատուն էլավ ուր խանդամներաց ասաց՝ հանզրվեք. որ իրիկուն պիտի էլնինք. ինքյն էլ կանց շուկից իրեք ծեռքյ շոր առեց պիրեց՝ մեկ գիկ. մեկ՝ իմ կնգյան, մեյն էլ՝ Մարոյին խամար. ասաց չյուր խասնինքյ մեր երկիր նոր Մարոյի խամար խարսնվան շորեր կարել կուտամ: Գյեր ըսկնա իրիկուն որ էլավ, էլան ուրենց ծիյանք խեծան, Մարոյին էլ մեյ խատ սիվդակ ծի ին պերե. էն էլ Մարոյին խեծուցին վերեն. կաց պանրև արին. ինգյանն ճանպախ. էսա վեց օր էլավ որ կանցեր ին: Խովիվն ի կասի՝ գյեր ըսկնա թակավոր ապրած կենաս:

Թակավորի լաճն ի, խետ կլսի, կտեսնա. որ ուր սիրահար տարեր ին. կէլնի գյնփնչալեն կէրթա տուն: Մարոյի խորոտութեն ընդյուց ըստես աշխրիս վերեն անուն արաց. ով որ խանպանր տա Մարոյի խորոտկութնի վերեն կզրյուցեն:

Էսա թակավորի լաճ կտեսնա, որ ուրիշ երկրից կուգյան ուր խողից ախչիկ կտանին. էն էլ ուր սիրահար Մարոն, արքարլամիշ կէլնի. դողրի կէրթան մոտ խեր. հանլ-հեքեանթ կպատմի խոր, կդառնա կասի՝ ի՞նչխ որ էլեր ի, ես պիտի էրթամ Մարոն կընտնեմ, առնեմ պիրեմ: Ըսկուն էլնի մարթ որ գյա իմ խողից իմ սիրած առնի էրթա, ես նստեմ մնամ:

Էսա լաճու խերն ի, ինչ կանդանր որ կխամոզի տղին, կասի.

- Պալա՛մ. վանզ կաց, էն ի՞նչ էր՝ խովվի ախչիկ, էլ չկա. անտար խանզանր մեկ ախչկան խամար ինչի՞ կէլնես կինես սար քար:

Լաճն ի կասի. - Զէ՛, ես ինչի՞ օր առուչ ծե ասեր եմ, էլմ էլ կասեմ, թե Մաւրոն կէլնի՝ կաոնեմ, կպասայվիմ, թե չէ՝ ես գիկ իմ հէրսից կսպանեմ:

Թակավորն ի կտեսնա, որ ճար չկա. կասի. - Քո մուր քո ճակատ, էլ ես չեմ խառվե. ի՞նչ գիտես. ըսկուն արա:

Էսա լաճն ի. կէլնի տյուս խոր մոտեն. կկանչի ուր սոտաշ ծառան. իտոր անուն էլ Կոպո ի, կասի. - Կոպո՛, քանշի մեր ջուխտ սև ծիյանք, որ տեղ կա պիտի էրթանքյ:

Կոպոն ի. կոչա ծիյայնտերաց ըսկուն ի կերցուցե. ծիյանքն էլ դյուս չեն էլե. խամ. խատիկ-խատիկ կխաղան. կքաշի դյուս ֆուխտ սև ծիյանք:

Լաճն ի կէրթա ուր թուր. խանչալ. խալվներ կխայնի կուգյա. խոր պարև կանի. կէլնի կխեծնի ծին. Կոպոն էլ ետև խաս կքշե կէլնեն դյուս քյաղքյից:

Էտա սև ծիյավորներն ի կքշեն կէրթան. կէրթան ճանապախ. դաշտի մեչ կտենան. որ խովիվմ ոչխարներ պիտի կայնցուցե դողրի ճամխու օրթեն:

Էսա լաճն ի կասի՝ Էս ծին խաո պիտի քշեմ, թե որ էսա խովիվ ոչխրներ ճամխից իխան դյուս՝ զաթի գիտի. որ էսա մարթ ասնմեղ ի. թե որ չէ, չի խան դյուս ճամխից. գիտի որ էսա մարթ սադանա ի, համ զմեն պան գիտի, ես էնգյախ կքշիմ կնցնիմ. ի՞նչ կանդար որ ոչխար մնաց ծիյու ոտաց տակ՝ շայնամ: Կքշիմ, կընցնիմ. էսա լաճ էսա մալվարսթի մեչն ի:

Էսա խովիվն էլ. որ կտեսնա թե զատամանց էրկու խոգյի սև ծիյով խաո կքշին կուգյան. կասի ինք ուր. - Իմ ոչխրներ ճամխի օրթեն կայներ ին. ես ոչխրներս չեմ խանե դյուս ճամխից. թե որ էսա մարթեր. որ կուգյանն. քաղաքավարի նամուսով մարթ ին, զանթի ուրենց ճանապանխ կշեղին, չեն իդա մեչ ոչխրներաց. կընցնին կէրթանն. էնգյանխ ես իսոնց պանն չեմ ասի. աստված իսոնց խետ. թող էրթանն ուրենց ճամխեն: Համան չէ՝ որ քշեցին դողրի ոչխրներաց մեչեն ընցան. ճանապանխ չշեղեցին. էնգյանխ գիտի. որ իսոնք չատ ին. ես իսոնց պիտի սպանեմ. իսոնց էլանծ չէլանծ խետ ուրենց ծիյայնտերաց պիտի առնեմ: Խովիվ կկայնի կաչկի. տեսնա խենքյ ի՞նչխ կէլնի:

Էսա թակավորի տղեն ի կմոտոխասնա կտեսնա. որ չէ. խովիվ ռեչ էն թանրանֆներ չէլնի. ոչխրներ թողե ճամխի օրթեն. ինքյն էլ կայնե կիրիշկա. լաճն ի. որ կտեսնա՝ չէ. էսա խովիվ իրար չէ դեպնի. ծիյեր խաո կքյշին կզանին դողրի ոչխրներաց մեչեն կընցնին կէրթանն. ուր տաս խատ ոչխար կինի ծիյայնտերաց ոտաց տակ. կխատնին:

Էսա խովիվն ի կտեսնա. որ էսա ծիյավորներ ռեչ իսկի ալդրմիշ էլ չարին. համան կքանշի ուր թուր կէրթան տեխ էսա թակավորի լաճ:

Թակավորի լաճն ի կտեսնա. որ խովիվ թուր քանշից էկավ տեխ ուր, ինքն էլ կքանշի ուր թուր կէրթան տեխ էսա խովիվ: Էն կզանի. էն կզանի. նա էն կանա վեր ինոր, նա՝ էն: Սորա թրեր կթանլին գյետին ուրենքյ կկպնին քյուշթին. վարռասը էսա թակավորի տղեն էսա խովվուն կդնի գյետին. որ կդնի գյետին. կասի. - Սպանե՛մ:

Էսա խովիվն ի կասի. - Սպանի՞:

Էսա թակավորի լաճն ի էլմ էլ կասի. - Սպանե՞մ:

Էսա խովիվն ի կասի. - Սպանի՞:

Վարռասը էսա թակավորի տղեն երեքյ անգամ կասի. - Սպանե՞մ:

Էսա խովիվն ի կասի. - Սպանի՞:

Էսա թակավորի լաճն ի կասի՝ չէ խեղճ ի. չեմ սպանե. կդառնա խովվուն կասի. - Զէ՛. քյե չե՛մ սպանե, չե՛մ սպանե, համան ինչ որ խաոցուցեմ պիտի դողրին ասես:

Էսա խովիվն ի կասի. - Որ գիտնամ ինչի՞ չէ. աչկիս վերեն:

Լաճն ի կասի. - Դյու ըստեղից իսկի ծիյավոր չտեսա՞ր. որ ընցնի:

Խովիվն ի կասի. - Խա՛. տեսա, իրեքյ խոգյի մարթ ին. էն մեյն էլ կնիկ էր. երես՝ ծածկուկ:

Լաճն ի կասի. - Աղե՛կ. մեյ պանմ էլ պիտի խաոցուցեմ քյե՝ համան դողրին ասես:

Խովիվն ի կասի. - Քյո գյլխու վերեն երթում կանեմ. որ գիտնամ՝ կասեմ:

Լաճն ի կասի. - Դյու չե՞ս գիտե՝ Ամբրվի քյաղաքյ ո՞ր ճանմխով կէրթան:

Խովիվն ի կասի. - Կերթաք էսա ճանպախ, եփ կէլնի էրկու ճող. դյուքյ աչ յանի ճամխով կնացեք. էն յանի ճանպախ դողրի կտանի Ամբրվի քյաղաքյ:

Խովիվն ի կասի. - Ինչի՞ խամար ի. աղա՛. որ կխաոցուցես:

Լաճն ի կասի. - Դու ի՞նչ անես կխաոցուցես:

Խովիվն ի կասի. - Զէ՛. աղա. դյու ասա, ես քյե յարամիշ կէլնիմ. դյու մառախ մանե. դյու որ զիկ չսպանեցիր, ես ինոր աղեկութնից ապա որ տեղից պիտի էլնիմ:

Էսա լաճն ի կասի. - Խովի՛վ. քյանի որ դյու խոսկ տվեր դողրի ասել. ես էլ քյե դողրի պիտի ասեմ. թե մենքյ ինչի՞ խամար կէրթանքյ Էդա Ամբրվի քյաղաքյ:

Լաճն ի կասի. - Մեր երկրի մեչ մեյ խատ խովիվմ կեր. ինոր մեյ խատ խորոտ խուրն խրեղեն ախչիկմ կեր. Մարո էր անուն: Ես ասեր ի. որ էդա ախչիկ պիտի առնեմ անպատճառ. մեկ օր լսա. որ էսա Ամբրվու քյաղքյի թակավորի տղեն իկե խապե. էդա խովվուն ախչիկ առե, կնացե. իտոր խամար ես էլ էլեր իմ ինգյեր իմ ետև, որ ի՞նչխ էլե կտնեմ պերեմ. իտոր խամար ի. որ քյե կխաոցուցիմ:

Էսա խովիվն ի կասի. - Աղե՛կ, որ զիկ ասիր. մկա էլ պանն չեմ ասե քյե. որ կէրթաս, աստված կհաջողի. ախչիկ կպերես՝ էլ մեյ էսա ճանմխով արե, մեկ որ ուրիշ ճանմխով չես կանա էրթա. մեկ էլ ես լսեր իմ էդա Մարոյի խամար շատ մանթ կանեն. կասեն աշխարիս երեսի վերեն էդասկնա խորոտ չէլե իսկի, մեյ խատ էլ պե, ես տեսնամ, նոր առ, կնա. շատ փափաքով եմ մնացե. դյու պե. ես քյե էլմ էլ յարամիշ կէլնեմ:

Լաճն ի խոսկ կուտա էսա խովվուն, որ դառնալուն անպատճառ կպերի ուր շանց կուտա: Կաց պարև կանի. կէլնի խետ ուր Կոպոյին. կինի ճանպախ կէրթան:

Կէրթան, կէրթան. շատ կէրթան. քիչ կէրթան. աստված կիտի. կէրթան. կխասնին էնտեղ, որ ճանպախ կպաժնվի էրկսի:

Իսոնքյ էդա խովվի ասածի վերեն կպոնին աչ ճանպախ կէրթան, կէրթան վարհասել կխասնեն Ամբրվի քյաղաքյ: Որ կխասնին. կէրթան քյաղքյի մեկ քեռշեմ պառվու տունմ կկընդնեն, կէլնին էդա պառվուն կոնախ:

Էդա օր կխանգստանան, էն մեկել օր կէլնին քաղաք ֆոալ, կասեն՝ խենքյ ինչ խանպար կաս, ըստեխից, էն տեխից կլսին, որ թակավորի տղեն հաջողե Մարոն պերե, գյեռ էսօր-վաղ պիտի պսայվի, խարսնսի պատրաստութեն ի որ կտեսնա:

Թակավորի լաճն ի, որ կլսի ալա Մարոն չի պսայվի, կմիյամտվի:

Իրիկուն ի կուգյանն տուն, կնստին խանպանր, խանպանր կուգյանն վեր էսա թակավորի լաճուն, ինան վեր Մարոյին:

Պառավն ի գյեռ կպատմի ի՞նչխ էլավ, ի՞նչխ չէլավ, ի՞նչխ ուրենց թակավորի տղեն կնաց կնտավ Մարոն, առեց էկավ. գյեռ էսօր-վաղ պիտի պսայվի:

Էսա տղան ի. որ կլսի պառվուց էսա խանպարներ, էն մեկ իրիկուն կկանչի պառվուն. ուր գլխու էկածներ զմեն կասի էսա պառվուն:

Պառավն ի էսա լաճուն կասի. - Մանմխ մանի. ինչի՞ որ ուզես ես հազր իմ:

Լաճն ի էն մեկէլ օր առատուն պառվուն կասի. - Պառա՛վ, կնա շուկեն զիկ մեյ խատ խորոտ սիլախ առ: Գյնին չիրիշկաս, ի՛նչ որ կուզին՝ տուր. մենա թե խորոտ ուսոլի պան էլնի:

Լաճն ի խուռչին կպանա, չորս-խինգյ խաթիր ոսկի կուտա էսա պառվուն, կասի. - Դե՛, առ կնա:

Պառավն ի կառնի ոսկիք. կէրթա շուկեն, կէրթա մոտ քյաղքյի էնանն նշանավոր կլշչուն մոտ, վով ի ինոր մոտ, կասի. - Սիլսախ ու՞նես ծախու. պե կառնեմ:

Կլշչին ի կասի. - Դո՛ պառավ, դյու սիլախ ի՞նչ անես:

Պառավն ի կասի. - Մեր տուն քյանիմ խատ կուրեպ կուրպաթ ին իկե. ճանփորթ ին. կէրթան, զիկ ասին՝ գյնին մի՛րիշկա. կնա մե խամար խորոտ սիլախ առ, պե:

Կլշչին ի ի՞նչ սիլախ, որ կպերի. էսա պառավ կառնի մեյ խատ կիրիշկա. վերեն. կթալի էնտեխ. կասի. - Պան կա. պան պերեքյ, իսոնքյ չե՛մ ուզե. խորո՛տ պանն պիրեքյ:

Ինչ կանդար որ սիլախ կա կթալին էսա պառվու առաճ. կասին. - Դե՛. ո՛րն որ կխանվնես. էն վերցուր. ա՛ռ:

Պառավն ի կպոնի իդնքան էլ կթսլի մեյ թուրաֆ. կասի. - Իսոնքյ չեմ ուզե. խո՛րոտ պանն կա պե՛. իսոնքյ իմ պանին չեն իգյան:

Իսոնքյ ի կասին. - Պառա՛վ, դյու ո՞ր տեղից կխասկնաս աղեկ. գեշ:

Պառավն ի կասի. - Էն որ իմ տղեն կպանցուցեր սիլախներ դյուքյ անլա դե՞որ իք: Կլշչեն ի մեյ խատ խորոտ շանշխանեմ շինե. որ թակավորի լաճ պասյվի. էնօր տանի տա. թակավորին աչկալոս: Կէրթա էդա շանշխանեն կպերի կուտա պառվուն. կասի. - Պառա՛վ. դյու գյին չես կանա տա. առ իսրան խենքյ ի՞նչ կուտաս: Գյեռ էսա շիներ ին թակավորի խամար. կանա՞ս փարեն տա:

Պառսուվն ի կասի. - Ինչի՞ չէ. քո դանվին ի՞նչ է. դյու կա անլա իսորից խորոտ պե. դյու գյնին մի՛րիշկա:

Կլշչին ի կասի. - Իդորից անվելի չունենքյ, իդոր գյին էլ էրկու խարիր ոսկի յի. խենքյ կանա՞ս առնե:

Պառավն ի կխանի ջեռբից չխկչխկալեն էրկու խարիր ոսկի կլցի էսա կլշչու ծեռ. սիլախ կառնի կուգյան:

Կլշչին ի կզարմանա էսա պառվուն. որ էրկու խարիր ոսկի իդուր. էդա շանշխանեն առից:

Պառավն ի կառնի էդա շանշխանեն կուգյա կուտա էսա լաճուն:

Էսա լաճն ի էլմ էլ կուտա խինգյ խարիր ոսկի էսա պառվուն. կասի.

- Կնա՛ շուկից էրկու ծեռք խարսի. ինանն փեսացվի շոր առ. ըսկուն շոր էլնի. որ էսա երկիրի մեչ իսկի չէլնի. փանրեն էլ մի խանայե. ի՞նչ որ կուզին՝ տուր:

Պառավն ի ոսկի չունի՞. ինչի՞ չառնե. ուրնից ի՞նչ կէրթա:

Պառավն ի կէլնի կէրթա շուկեն. անն ճոչ խալավ կարողի դյուգյանն. որն ի կէրթա. էնտեղ կասի. - Զիկ էրկու ծեռքյ մեկ մանրդանն. մեկ զանանն խարսի ինանն փեսացուցի խալավ տվեքյ. ի՞նչ որ կուզեքյ՝ կուտամ:

Կպերեն մեյ քանիմ տեսակ խալավ: Պառավ իսոնց մեկին էլ չի խավնե. կասի. - Խորոտ պանն կա՞՝ պերե՛քյ. իսոնքյ չե՛մ ուզե:

Էսա թանրզիքն ի կմտածեն կասեն. - Անլա թակավորի լաճու խարսնիս վաղ չէ մեկել օրն ի. պերենքյ էսա թակավորի խարսի և փեսի խալվներ էսա պառսվու վերեն ծախինքյ. նոր ինոր խամար կկարենքյ կխասուցենքյ չյուր վաղ չէ մեկել օր:

Թանրզիքն ի կպերեն թակավորի լաճու ինանն խարսի խալվներ կթալեն պառվու առաճ կասեն. - Դե. պառա՛վ. կանա՞ս իսոր փանրն տալ. տենանքյ խենքյ դյու առնո՞ղն ես:

Պառավն ի. կառնի մեյ խատ վանրավյուր կանի շորեր. կասի իսորից էլ անլեն կա՝ պե. ես չէ՞ ասեցի. որ փանրեն չիմ աչկե. կուտամ. մենակ թե ըսկուն էլնի. որ էսաւ քյաղքյի մեչ էլ իսկի ինոր նմուշ չէլնի:

Թանրզիքն ի կասին. - Իդորից էլ անվել պանն չունենքյ. էդ էլ որ կա. թակավորի լաճու ինանն ինոր խարսի խալվներն ի. քանի որ ինոր խարսնիս վաղ չէ մեկելն ի.

Էսա կուտանքյ քյե, ՇՈՐ ԻՇՈՐ խամար կկարենքյ կխասցուցենքյ. դոր գյին էլ իրեքյ խարիր ոսկի ի:

Պառավն ի. չունի՞ ոսկի. կխանի չխկչխկալեն. կխուսմբրի իսոնց ծեռ:

Էսա թարգիք կզարմանան. էսա պառվուն կասին. - Էսա կանդար ոսկիք որտեղի՞ց ի էսա պառվուն:

Պառավն ի կառնի էդա խալվներն էլ կուգյա տուն. կուտա էսա լաճուն:

Լաճն ի էդա խալվներն էլ կառնի կդնի էնտեղ ուր սիլախներաց մոտ. կդառնա պառվուն կասի. - Պառա՛վ. մնաց զիկ մեյ պանն. էն էլ առ. կպոծնես զիզնից. ես քյո ճանն ի՞նչ ի կուտամ, մանանխ մա՛նե:

Պառավն ի կասի. - Դյու քյո պանին իրիշկա. ննյանն դընր, դյու քյո պանից պոծի. Շոր իմ պանն կոլայն ի:

Լաճն ի կասի. - Զիկ մեյ խատ էլ խորոտ ծիմ լազմ ի, էն էլ պե՛, էլ քեզնից զատ չեմ ուզե. - կխանի խուռջնից խինգյ խարիր ոսկի կուտա պառվուն. կասի. - Դե՛, առ կնա, մեյ խատ էլ ծիմ առ զիկ:

Պառավն ի կառնի էդա խինգյ խարիր ոսկին. կէրթա մեյդանն, որ մեյ խատ ծիմ առնի: Կէրթա կխասնի մեյդանն. կխառցուցի. - Մեյ խատ խորոտ ծիմ վեր կա. պերեքյ առնեմ:

Գյեռ ի՞նչ կանդանր որ ծի կա, կպիրեն:

Պառավն ի մեկին էլ չի խավնե, կասի. - Ծի՛ կա՞, ծի պերեքյ, խորո՛տ ծի էլնի. գյնին չեմ աչկե, կուտամ ի՞նչ որ ուզեքյ:

Ջանբզի մեկ կպերի մեյ խատ խորոտ ծիմ. էսա պառվուն կասի. - Պառավ. մեյ խատ ծիմ ունեմ. որ գյին չկա. վախենամ գյին չկանաս տա, էդա ծին էլ խոսք տվեր իմ մեյ խատ սանդրանզանմիմ. որ պիտի առնի տա թակավորին աչկլոս:

Պառավն ի կասի. - Պե՛, պե՛, ես կառնեմ. քանի որ էլնի:

Ջանբազն ի ծին կառնի կուգյա պառվու մոտ. կասի. - Գյեռ էսա ի. կանա՞ս գյին տա. իսոր գյին խինգյ խարիր ոսկի ի:

Պառավն ի կիրիշկա ծիյուն. կտեսնա. որ ՝անղորթմանց ծին կաժի. կխանի խինգյ խարիր ոսկին կուտա. չունի՞ ոսկի: Ծին կքյաշի. կառնի, կէրթա տուն:

Լաճն ի կտեսնա, որ ծին էլ էկավ, էլ ուրիշ պանն չմնաց, մնաց որ՝ ի՞նչխ պիտի էրթա ախչիկ թակավորի տնեն պերի. իտոր վերեն կմտածի մենակ:

Իրիկուն, որ պառավ կուգյա տուն, էսա լաճ պառվուն կասի. - Պառա՛վ. զմեն պանն էլավ, մնաց մեյ պանն. մնաց թակավորից ախչիկ պերել. ի՞նչխ պիտի պերինքյ, ես վեր իդոր կմտածիմ:

Պառավն ի կասի. - Մանանխ մնե՛, էդ ա էլ՝ վեր զիկ:

Լաճն ի կասի. - Ի՞նչխ, պառա՛վ, դյու ի՞նչխ կանաս պիրե:

Պառավն ի կասի. - Ես ի՞նչխ որ կասիմ ըսկուն էլ պիտի անես. որ արեցիր էնգյանխ զմեն պանն կէլնի:

Լաճն ի կասի. - Դյու ի՞նչխ որ ասեցիր, ես էլ արի, ի՞նչխ պիտի անիմ:

Պառավ ի կասի. - Դյու զիկ մեկ ոսկի էլ տու, իս քյե կասեմ:

Տղեն ի կասի. - Պառա՛վ, մկա ՝ալն ոսկու գյանխն ի, դյու իմ պանն ճաջողացրու. էլ ի՞նչ պիտի անիմ էնա խուռջին ոսկիքյ, կթողնեմ քյե, կէրթանմ:

Պառավն ի կասի. - Դյու մեկ ոսկի տուր մկա իս կուգյանմ, քյե կասիմ. թե ինչի խամար ի, ինանն ինչխ պիտի անես:

Լաճն ի կխանի մեկ ոսկու տեղ տաս խատ կուտա. կասի. - Դե՛, առ կնա ի՞նչ կուզես արա:

Պառավն ի կառնի ոսկիքյ կէրթա՝ շուկեն. քառսուն խատ խաստ էրկթե ցից կառնի. ինան մեյ կոտ կորեկ կուգյա՝ տուն:

Իրիկուն ի կկանչի լաճուն կասի. - Արե՛ ըստեղ:

Կտանի մոտ զինքյ կասի. - Էսա էրկթե ցցեր կտեսնա՞ս. էսա քառսուն խատն էլ պիտի առնես խետ զիկ. իմի որ էրթանքյ. էրթանքյ չյուր թակավորի սարեն. էնտեղ էդա ցցեր պիտի զանես պատ. մեկ մեկ չյուր էլնես խասնես վերին կատ: Թակավորի տղեն ինան Մարոն էն տեղ կէլնին: Փենջարից կմտնես ներս, էնգյանխ ի՞նչ կիտես ըսկուն արա, թակավորի լաճուն կսպանես, կխեղդես, քյո գիտնալիք պան ի, էսա կորեկն էլ որ առեր իմ գիտես ինչի՞ խամար ի. կելեր ի մենքյ մեյդրան չենքյ կանա էրթա՝. սորա շֆալսիմիշ կէլնես, ես առճվանց կէրթամ. էսա կորեկ ցանելով հան կէրթամ, դյուն էլ ինոր դանվս կպոնես կուգյանս, կուգյանս որտեղ որ կտեսնաս կէոլեոմ լցուկ կա. էնտեղ կկայնես էնտեղն ի թակավորի լաճու տուն, նոր էդա էրկթե ցցեր կզանես, պատ կէլնես չյուր փենջարեն, մկա խասկցա՞ր:

Լաճն ի կասի. - Խա՛: Դե, - կասի, - մկա էրթանքյ:

Պառավն ի կասի. - Զէ՛, ալյն թող էրթան ժամ փսայվին գյանն, կիշեր, եփ էրթան ուրենց էօդեն. նոր էնգյանխ. մկա սալս ի՞նչ կա: Էդ օր թակավորի լաճու խարսնսի օրն ի: Էսա իրեք օր էլալ, որ թակավորի սարեն կդնդա զարկիցի ծենից:

Քյաղքյի ճաղամաթ բիթհուն թափեր ին թանմաշա. բիթհուն էրանեկ կուտան Մարոյին, կասեն՝ բանխտանվոր էլնես:

Էսա լաճն էլ կնացեր էր թանմաշա, խետ ուր նանֆարին:

Իրիկուն Մարոն կտանին ժամ, խետ թակավորի լաճուն կփսակին. կպերին տուն:

Էլ քյեֆ. էլ ուրախութեն, էլ ի՞նչ ասես չեն անե. չյուր կես կիշեր, հարքաշ կքանշվին, կէրթան ուրենց տներ: Էսա թակավորի լաճն էլ կառնի ուր կնիկ կուգյա՝ ուր էօդեն:

Պառավն ի խետ կուգյա՝ գյախ լաճուն. կասի. - Դե՛, էլի վեր. գյախն ի:

Լաճն ի ուր սիլախներ բիթհուն կառցկի. կդնի էնտեղ, մենակ խանչալ կզանի մեչքյ, կառնի էդա քառսուն էրկթի ցցեր. պառվուն կասի. - Դե՛. էլի:

Պառավն ի կասի. - Հա՞գր իս. - կառնի էդա մեկ կոտ կորեկ. կլցի փեշ, կդառնա Կոպոյին. էդա լաճու խանդամին կասի. - Զէլնի քյնես. կաց վեր դռան, մի աչկի, չյուր գյանք:

Կասի լաճուն. - Դե՛, էլի՛, էլի՛ էրթանքյ:

Պառավն ի կինի էսա լաճու առաճ, մեկ էրկու խարիր գյանզ զատամանց կէրթա՝ կորեկ ցանելով: Պառավ կորեկ կցանի, կէրթա՝, էսա լաճն էլ իդոր դանվս պոնելով կէրթա՝, կէրթա՝ չյուր մեյ տեղ, էսա լաճ կտեսնա. որ էլ չկա, էլ չերևա կորեկ: Մեյ խատ աչկեր կվերիցի վեր, կտեսնա որ մեյ խատ չորս կաստ տան առաճմ կայնե. կիրիշկա, որ աղորթմանց պառավ ինչ ի ասեր էր, պիրից թակավորի սարի դռան առաճն էլ կայնցուց:

Պառավ կֆռա կուգյա՝ ուր դռան վերեն կաչկի էսա տղին:

Էսա լաճն ի կիրիշկա տարբար կտեսնա, որ նեռբանչիք սարխոշեր ին, կխանի էրկթե ցցեր. մեյ կտնի մատի ծերով կճխթի կերթա՝ պատի մեչ. ըսկուն որ վոժով ի, մեյ գյաւզ կթողնի մեյ խատ ցից կզանի, հա՛ զանելով. հա՛ էլնելով չյուր էդա քառսուն էրկթե ցից կխլսնի, լաճն էլ կխասնի զանթի թակավորի լաճու դողրի փենջարի տակ, որ կխասնի փենջարի տակ կտեսնա, որ փեսեն պառկե մեջ տեղաց. էսա ախչկան կաչկի, ախչիյն էլ հա՛ կշրջեվի:

Էսաս լաճ ի կատաատորի չյուր խորոտ գյախ կկնտնի. ճաման կզանի փենջարեն կկոտրի. կնտնի ներս. խմնջալ կկաշի. կէրթա տեխ էսա լաճ. էսաս լաճուն մեչ յաթաղին կանի կիմա-կիմա. կդառնա ինոր փեսութնի խալվներ կխայնի. Մարոյի թևից կպոնի. կասի. - Սուա կաց. թե չէ քյե էլ էնասկնա կանեմ:

Ախչիկ ամխու ծեն կկտրի:

Էսա լաճ ի կմտնի Մարոյի թև դոդրի կուգյմ թարանջիկ կէճնի տակ խետ Մարոյին. կուգյան դոնից կէլնին դյուս. դոդրի կէրթան չյուր պառվու տուն մեկ:

Նեռբանչիքն ի կտեսնան. որ խարս ութեսեն էլան դյուս. սալամ պոնեցին չյուր ընցան: Ինոնքյ ի՞նչ կիտեն ի՞նչ ընցավ դառցավ. տեսան. որ փեսի խալվովն ի մարթ. ասին՝ գյեռ փեսեն ի. առից ուր կնիկ էլավ ֆոալ:

Լաճն ի կաուռնի Մարոն. կուգյմ տուն. էլ չեն աչկե. ճաման կէլնեն ի՞նչ որ կա. կիշրով թարաբարա կանեն. էդա խուռջին ոսկին էլ կուտան պառվուն. ուրենքն էլ կէլնին ուրենց ծիյմնքյ կխեծնեն. էն առած ծին էլ կպիրեն ախչկան խեծուցին. պառավուն կաց պարև կանին. կինին կիշրով ճանպախ. կուգյան:

Կէրթան. կէրթան չյուր լույսին դեմ կխասնին մեյ խատ չիմնիմ մոտ. կեճնին էդա տեղ՝ քիչմ խանգստանան:

Էսա լաճն ի. որ կեճնեն էդա տեղ. նոր թանյմին կանի Մարոյին. կասի. - Մեյ խատ ալա իրիշկամ Մարոյի իրես. մեյ խատ տեսնամ. ջայնամ. նոր ի՞նչ կէլնի կէլնի:

Լաճն ի. որ աչկեր կդառցուցի տեխ Մարոն. կտեսնա. որ ի՞նչ՝ Մարոն խարամվե. սիվցե. մնացե: Խետ որ կտեսնա. կզարմանա. կասի ինքյ ուր՝ էսա չէլնի զիկ խապեր ին. ես էսա ի՞նչ երեսով պիտի տանեմ իմ խոր իրես. ես որ իմ խոր ասեր ի՝ աշխրիս խրեդեն ի:

Լաճն ի. իսոր վերեն կմտածի. կմտածի. չյուր քուն կտանի. կպառկի էդա տեղ. կքնի մառախից: Լաճ որ կպառկի կքյնի. Կոպոն ինան Մարոն նեռբաթ կքյուշին: Չյուր մեկ էրկու սահաթ. էսա Կոպոն մեկ էլ կտեսնա ի՞նչ. գյեռ էն թուրաֆից մոճման պես ամքյրներ փոթեր ին. կուգյանն դոդրի տեխ ուրենց: Կոպոն կտեսնա. որ ամքյրներ ուրենց շապկեցին. կոիվ պիտի էլնի. ուր աղին ծեն չի տա. կքյաշի ուր թուր. կինի մեչ էտա ամքյրներաց. կբաշլայի ջարդել: Չյուր ուր աղեն քնուց կզարթնի. կտեսնա. որ չորս տեխ ամքյրներ պոներ ին: Կէլնի ինքն էլ էսա մեկել յանից կինի մեչ ամքյրներաց, էն էլ էսա յանից կբաշլայի ճարդել, չյուր իրիկուն ի՞նչ կանդար որ ամքյար կա, բիթիանին էլ կանեն տարմատաղան. իրիկուն նոր կուգյան էլմ ուրենց տեղ կնստին:

Ինչ որ ամքյար կփոթնի. կէրթա ուրենց թակավորին էլած-չէլած կպատմին:

Որ կուգյան կնստին. էսա լաճն ի կտեսնա. որ Մարոն էլմ էլ էն ըռանգյին ի. ալա պամ էլ ի գյեշացե. լաճ մառախից էլմ էլ քուն կուտա վերեն:

Մարոն ի. կտեսնա. որ լաճ քուն վերեն ի. որ ըսկնեմ կմտածի. կտեսնա. որ իսոնքյ քյնուկ ին. կէլնի ուր իրեսի քող կքաշի կէրթա վեր ախպրին. կլվացվի. կուգյա կնստի:

Էսա լաճն ի. քուն կառնի. աչկեր կպանա. որ էլնի վեր ինեն ճանպանխ էրթան: Որ աչկեր կպանա. մե խուստ ուր աչկ կինի Մարոյի երես. կտեսնա. որ ի՞նչ. կասե գյեռ լյուսնակ ի նստե ուր դեմ. կիրիշկա՜, կիրիշկա՜. չավադա ուր աչկերանց: Վանրհասալ կտեսնա. որ Մարոն կասես առաճվնից էլ դհա խորոտկցե. դառցե արեգյակ. որ կտեսնա Մարոյի էսասկնա. նոր սիրտ կպանցվի. ֆեռախլամիշ կէլնի. կինի խետ էսա ախչկան. կասի. - Քյե ի՞նչ էլավ. ըստյուց ասհաթմ առնճ էսասկնա չէր:

Մարոն ի կխապի, կասի. - Առաճն էլ էսասկնա ի, համաև քյո ասչիչ ուրիշ տեսակ կերևի. աղա՛, ես ինչխ եմ. էլմ էն եմ. չեմ փոխվե:

Լաճն ի Մարոյի խապրին կավատա. ուրախութնե Կոպոյին ծեն կուտա. կասի. - Կոպո՛. էլի վեր. էլի վեր, անգյան ի. էրթանքյ:

Կոպոն ի կէլնի վեր ծիյանքյ կհագրի. իսոնքյ կէլնեն մե մեկու ծին կխեծնի, կինի ճանպնխ. կէրթնն:

Ծատ կէրթնն. քիչ կէրթնն. կէրթնն վանրհասըլ կխասնին չյուր էդա խովվու մոտ:

Խովիվն ի, որ կտեսնա իսոնց կէլնի մեկ էրկու խատ կաո կմորթի, իսոնց պատիվ կանի: Կնստին էսա լաճ կպատմի, թե ախչիկ ի՞նչխ կնանց մտավ թակավորի լաճու էօդեն. լաճ ապանից. Մարոն ազատեց պերեց:

Խովիվն ի կասի. - Դյու զիկ խոսք իր տվե. աղա ջան, որ եի աստված կամենա դառնաս. քյո Մարոն զիկ շանց պիտի տիր. ուրե մեյ խատ տեսնամ, խերիքյ էլավ ես ինոր խամար մառնխլի մնամ:

Լաճն ի Մարոն ի կկանչի կպերի, կասի. - Մարո. արե՛, արե՛ թող քյե տեսնա էսա մեր խովիվ, խոսք ինքյ տվե:

Մարոն ի շորեր գյեռ խագյե. էլե կասես գյեռ հյուրի փարի. ըսկան խրեղեն, կուգյան որ կէլնի իսոնց իրես. լաճ զնթի խելքյ կթանի. կտեսնա, որ քյանի էրթա Մարոն օր վեր ավուր կխորոտկնան:

Էսա խովիվն ի, խետ կտեսնա, կասի. - Վալայի բիլայի պռավո. ազորթ, - կասի. - համաև մարթ չյուր չտեսնա, չի կանա ասե, պախի քյե խամար. աժեր էրթալ պիրել:

Լաճն ի կդառնա խովվուն կասի. - Փափաքդ առի՞ր:

Խովիվն ի կասի. - Խա՛, վանն աժից:

Խաց, պան-մանն կուտին, էսա լաճն ի կասի. - Դե՛ էլնենքյ անգյան ի:

Կոպոն ի կէլնի ծիյանքյ կհանզրի: Իսոնքն էլ կաց պանրև կանեն խովվին, կէլնեն խեծնեն ծիյանքյ. որ պիտի քշեն:

Էսա խովիվն ի կասի. - Կայնեքյ, ես ծե մոոցա ասեղ. իմ մտեն կնանց ինգյանքյ խետ խանարի: Մկա դյուք ես կիտեմ էսա ծախ յանով պիտի էրթաքյ: Կէրթաքյ իրեքյ խատ դևու ինանն ինոնց մոտ պիտի ըռաստ գյաք. ի՞նչխ պիտի անեքյ:

Լաճն ի կասի. - Դյու ի՞նչ կիտես:

Խովիվն ի կասի. - Ի՞նչխ չեմ կիտե, էն օր թանզն ես ծե չասի, էն օր դևեր քնուկ ին, էսա ոչխարներն էլ որ կա ինոնցն ի, ես պերեր իմ կարաձամ, - խովիվն ի կասի, - կիտե՞ք ինչխ պիտի անեքյ: Էսա ճանմխով որ կէրթաքյ, անն դևերաց տներ չխասած, մեկ չորս խարեր գյազ ըստեղ մեյ խատ կարմունջմ կա, էդա կարմնջի տակն էլ մեյ խատ թյուլեմ՝ կա, ինոր ըմեն մեկ մազի վերեն մեյ խատ զանգյանկ կա. որ էրթանքյ խետ. ծե տեսնա մեյ խատ իրար կտեպնի, խետ որ իրար տեպավ, էդա զանգյակներ բիթհուն կզանին. էնգյանխ դևեր կիմնան, որ մարթ էկե ուրենց թարնֆներ, կէլնեն կֆուսն խետ կնդան գյեռ կիտես ի՞նչ կանին. կպատոտին: Էդա թյուլեն ինոր խամար կպախեն էդա կարմնջի տակ, որ առաճվենե ուրենց նշմար անի:

Էսա լաճն ի կասի. - Անն բանից չենքյ պոծե. էսա որ կա ճոչ բանլեն ի:

Խովիվն ի կասի. - Պանն չկա, ծեր բախտից. էսա իրեքյ օր ի, որ մեյ խատ խորոտ թակավորիմ ախչիկ ին պիրե, էլավ իրեքյ օր ի. որ դրեր ին վեր սեղնին, ուրենքյ էլ շարվեր ին. ամրանֆ թանմանշ կանին: Էդա ախչկան խորոտկութնի վերեն խելքյներ կնանցեր ի: Իդոր խամար էսա էլավ իրեքյ օր ի, որ թյուլին զանտ չեն տվե, մկա թյուլեն

ինադ արե: Ես ծե կուտամ մի կտոր դմմնկ, կտանեքյ ծեր խետ, եպ կխասնեքյ էդա կարմնջին, թե չէ՝ էդա դմմնկ թալեքյ թյուլի առաճ, ընգյալխ էլ թյուղեն ծեն չի խանե: Դյուք խանգիստ կընցնեքյ կէրթնքյ չյուր դևերաց դռան առաճ. էնտեղ դյուք կիտեքյ. կմնա ծե ի՞նչխ պիտի անեքյ դյուք կիտեքյ, զիզնից էսականդուր պանն ծե ասել, էսա իմ աղեկութեն:

Լաճն ի կասի. - Որ խասանքյ չյուր վեր դևերու դռան, էնտեղ կոլայն ի, ես կիտեմ էնգյախ ի՞նչխ կանեմ:

Խովիվն ի կէլնի մեյ խատ գյաո կմորթի. դմմնկ կքոթի, կուտա իսրանց:

Էսա լաճն ի կառնի էսա դմմնկ. կէլնին կխեծնին ծիյանքյ, ինքյ կինի զմեանի առաճ. կէրթնն, կէրթնն կխասնին էդա կարմնջի մոտ, կիրիշկան կտեսնան, որ ամդորթմանց գյեռ թյուլեմ կարմնջի տակ կապուկ ի:

Էսա թյուղեն ի կգյոմռա, կանի որ իրար տեպնի, համան խետ էսա լաճ կտեսնա թյուղեն, էդա դմմնկ սաղ-սաղ կթնալի էդա թյուլի առաճ, թյուղեն խետ կտեսնա դմմնկ, էլ ծեն չի խանե:

Էսա լաճն ի կասի. - Ամդորթմանց, որ ինատ արե շուն:

Կթողնեն շուն ուրենքյ կէրթնն, կէրթնն դոդրի կկայնեն դևերու տան մոտ: Դռան դիմաց չեն կայնե, որ դևեր չտեսնան, կքնշվին մեկ կող՝ կմնան էնտեղ:

Էսա լաճն ի ծիյուց կեճնի տակ, կքնշի ուր թուր, կուգյն կկայնի դևերաց դռան կողի խետ, հազր ալաստա դռան ծակից կիրիշկա ներս, կտեսնա, որ ամդորթմանց, մեյ խատ խորոտ ախչիկմ դրեր ին վեր սեղանին, ուրենքն էլ մերով տղեյներով շարվեր ին ամթրնֆ թնմնշն կանեն:

Ինոնց պառավ մերն ի զմեն պանն կիտի: Կդանոնա ուր սղեյներաց կասի. - Է՛յ պալե՛քս, ստեղից մարդ-մարդախոտ կուգյն:

Դևերն ին կիրիշկան մեյ մեկելու երես, խոտ կանին կասեն. - Մարե, ամդորթ որ մարդ-մարդախոտ կուգյն:

Մերն ի կասի. - Մեյ խատ էլեք դյուս, տեսեքյ վո՞վ կա, էսա մարդ-մարդախոտ ո՞րտեղից ի կուգյն:

Մեկ դև կուգյն, որ էլնի դյուս, խետ որ գյլեռխ կխանի դյուս, ամդյում էրկու կընցնի ըստես, լաճ վմլն թուր կթնալի, խետ որ կթնալի դևու գյլեռխ կէրթն մեկ յան, ջանդանկ՝ մեկ յան: Մերն ի կտեսնա, որ լաճ ամգյնցավ, էն մեկել լաճուն կասի. - Կնա՛ տես ախպերդ ի՞նչ էլնվ:

Էն մեկել ախպեր կուգյն, էն էլ խետ կէլնի դյոա, մեկ էրկու ամդյում դռնից ոտ կթնալի էսա յան, լաճ մեկ խատ էլ թուր կթաղի, խետ որ կզանի, ինոր գյլեռխն էլ կէրթն մեկ յան, ջանդանկ՝ մեկ:

Էսա դևերու մերն ի կտեսնա, որ մեկ լաճն էլ ամգյնցավ, էն մեկել ախպոր կասի. - Պալա՛մ, կնա՛, տե՛ս քո ախպերներաց ի՞նչ էլավ, էսասկընա ամգյնցան. չէլնի մեյ պանն իկե գյլխներ:

Էսա մեկել ախպերն ի աջալա կվազի, որ էրթն տեսնա խենքյ ախպերներ ի՞նչխ էլան, ոտկեր ալն դռնից տեռ չի թալե դյոա, էսա լաճ մեյ խատ էլ թուրն կխասուցի, խետ կզանի, էսա դևն էլ կմնա տեղնուտեղ:

Լաճն ի, որ կտեսնա իրեքյ դևն էլ սպանված, խետ Կոպոյին հյուջյում կանին, կմտնին ներս, կէրթն տեխ դևերաց մեր: Կէրթն որ պիտի սպանեն: Էնա պառավ կխասնի ուր ճպոթ կառնի, մեյ խատ կզանի վեր էսա լաճու քյամկին, էսա լաճ կդառնա մեյ խատ սև կոիկ, կէրթն կնստի վեր էսա պառվու գյլխուն, կբնշլալի իսոր գյլեռխ կտցիլ:

Պառավ կտեսնա, որ ճար չկա. մեյ խատ էլ կզնանի էսա կոկան. կոիկ կդառնա մեյ խատ սև կատու, կփախնի. կմտնի էսա պառվու ոտկերաց մեչ:

Պառավ կտեսնա, որ էլմ էլ չի կանա ուր ինքնին առնե. մեյ խատ ճպոթ կզանի վեր էսա կատվու քյնմկին. կասի՝ էլի խոզ, որ կասի՝ էլի խոզ. կատուն կդառնա խոզ, ինղորթ որ խոզի պես կկայնի էսա պառվու առաջ:

Էսա լաճ խետ կդանոնա խոզ. պառավ կառնի ճպոթ կուգյն տեխ էսա խոզ որ տփի: Խոզ թե որ ինա քիթ մոութ գյետին ի, պանն կփտոի. էսա պառվու ծեռաց ճպոթն էլ ծեր առեր էր գյետին, խոզ կիտնալով, որ էդա ուտելու պանն ի, կխասնի վերեն. կպոնի պերանն կքյնշի: Մկա պառավ կքյնշի. խոզ կքյնշի, պառավ կքյնշի, խոզ կքյնշի: Նա՛՝ էն կանա տանե, նա՛՝ էն, չյուր վանրհասըլ էսա խոզ մեյ խատ էլ կլխքի, խետ լխքելուն էսա ճպոթ պառվու ծեռնեն կթոնի:

Մարոն ինան Կոպոն կայներ ին էն թանրանֆ, թանմանշան կանեն: Կտեսնան, որ թակավորի տղեն կդառնա թանվուր-թանվուր պանն, կայներ ին կծծղան, խելքներ կէրթան, ուրենքյ-ուրենքյ կասեն՝ լաճ մանխայուսի էդասկնա կանի:

Մարոն ի կտեսնա, որ պառավ ճպոթ առեց, էկավ տեխ խոզ. խոզուն կտփի. տեսավ, որ խոզ արաց չարաց չյուր պառվու ծեռնեն փետ խլեց. խետ որ կտեսնա. էդա ճպոթ ինգյանվ գյետին: Սիրտն էլ մոմոաց, որ ճպոթով խոզուն կտփեր էդա պառավ, համան կխասնի ճպոթ գյետնից կառնի մեկ, էրկու, իրեքյ կուտա մեչ էսա պառվու մեճաց: Ախչիյն ի, ի՞նչ կիտի՝ անմեղ կզանի: Էդա զանրկած գյանխ կտեսնա. որ պառավ դառցավ իրեքյ գլխանի պստիկ ջանանվանր. որ դառցավ ջանավար, էսա խոզ հանմանն խասավ վերեն. կերավ:

Էսա ախչիյն ի. կտեսնա չէ՞ մարուֆաթ որ կա՝ մեչ էդա ճպոթին ի. կասի՝ մեյ խատ զանեմ վեր էսա խոզի քամկին. ասեմ էլմ էլ էլի առաճվան պես. տեսնամ խենքյ չէլնի, կզանի ճպոթ վեր խոզու քյնմկին. կասի՝ էլի մարթ:

Բիրդանն կտեսնա, որ էդա խոզ դառցավ էլ մեկ թակավորի տղեն:

Թակավորի տղեն կիտի պանն որտեղ ի, հանմանն կխասնի էդա ճպոթ Մարոյի ծեռնեն կառնի, կպախի ուր մոտ: Սորա Կոպոյին կասի. - Կոպո՛. կնա իսոնց փանյխի ինչ կանդանր, որ տավար կա խան, պանցի:

Կոպոն ի կէրթան փանգյախ, դյուռ կպանա կտեսնա, որ ի՞նչ՝ չորս խարեր խատ ջեորի կա, կխանի էդա ջեորիքյ կպերի, ի՞նչ կանդանր որ էդա դևերաց տուն թանգյաքին պանն կեր կպառնա, կէլնին կինին ճանպախ կէրթան: Կէրթան կխասնին էդա խովվուն էլմ էլ, կպատմին խովվուն, թե՝ ընկնա արիքյ, սորա կասին՝ էդա ոչխարն էլ թող քյե մնա: Էսա էլ մենքյ կտանինքյ, կաց պանրև կանին, կէլնին կինին ճանպախ. կուգյան կխանանին ուրենց քյաղաքյ:

Թակավոր որ կլսի, թե ուր լաճ իկե, շատ կուրսխանա: Կպիրի յոթ օր, յոթ կիշեր խարսանիս կանի, ուր լաճ վեր Մարոյին կպսակի: Ինոնքյ կխասնին ուրենց մուրադին, դյուք էլ խասնեքյ ծեր մուրադին: